ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **20/մայիսի/2022 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ....13..... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավարի պաշտոնակատար Արտակ Բագրատյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վահագն Արսենյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 20-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 16-ի N 112-Ա որոշումը և «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.2. «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 9-ի N 77-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 3-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.6. Համայնքային սեփականություն հանդիսացող կանաչապատ և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում ծառահատման, այդ թվում՝ սանիտարական հատման աշխատանքներ կատարելու համար թույլտվություն տալու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Արսենյան

1.7. 44-օրյա պատերազմի զոհերի ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Արսենյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----13---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 112-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 81-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով «Բազմաբնակարան շենքի

կառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 42-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետերի դրույթները՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 16-ի «Ջերմուկ համայնքում «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակեր–պություն ստեղծելու մասին» N 112-Ա որոշումը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------13 Դեմ----------0 Ձեռնպահ----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 77-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 4-րդ մասի՝

1. «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող որոշ գործառույթներ Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 16-ի N 112-Ա որոշմամբ նոր ստեղծված «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը վերապահելու հանգամանքով պայմանավորված «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ–ի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 9-ի «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 77-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 67-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի «Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 3-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելված 2-ի ««Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ» բաժինը (ՀՈԱԿ–ի հաստիքացուցակը) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891- պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 22319,827 հազար ՀՀ դրամով, որից՝

ա) 10066,955 հազար ՀՀ դրամն ուղղել «06-01-01-բնակարանային շինարարություն» գործառնական դասակարգման «4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածին՝ «Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի 2022 թվականի հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար, մի աժամանակ՝ նույն գործառնական և տնտեսագիտական դասակարգումներով «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվից նվազեցնելով 3562,98 հազար ՀՀ դրամ:

բ) 2434,375 հազար ՀՀ դրամն ուղղել «06-03-01-ջրամատակարարում» գործառնական դասակարգման «4511- սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական, համայնքային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածին՝ «Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի 2022 թվականի հունիս- դեկտեմբեր ժամանակահատվածի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար, միաժամանակ նույն գործառնական և տնտեսագիտական դասակարգումներով «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվից նվազեցնելով 1713,250 հազար ՀՀ դրամ:

գ) 1386,725 հազար ՀՀ դրամն ուղղել «06-04-01-արտաքին լուսավորվածության ցանցի սպասարկում» գործառնական դասակարգման «4637- ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածին՝ «Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի 2022 թվականի հունիս-դեկտեմբեր ժամանակահատվածի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար, միաժամանակ նույն գործառնական և տնտեսագիտական դասակարգումներով «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվից նվազեցնելով 1572,4 հազար ՀՀ դրամ:

դ) 8646,375 հազար ՀՀ դրամն ուղղել «05-06-01-կանաչ տարածքների պահպանում» գործառնական դասակարգման «4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածին՝ «Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի 2022 թվականի հունիս-դեկտեմբեր

ժամանակահատվածի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար՝ միաժամանակ նույն գործառնական և տնտեսագիտական դասակարգումներով «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի ծախսերի կատարման նախահաշվից նվազեցնելով 5837,2 հազար ՀՀ դրամ:

ե) 11119,667 հազար ՀՀ դրամն ուղղել «05-01-01-աղբահանություն և սանիտարական մաքրում» գործառնական դասակարգման «4637- ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածին՝ «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի 2022 թվականի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար:

զ) 1140,060 հազար ՀՀ դրամն ուղղել «06-02-01-համայնքների զարգացում» գործառ-նական դասակարգման «4637- ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածին՝ «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի 2022 թվականի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար:

է) 211,5 հազար ՀՀ դրամն ուղղել «04-07-03-զբոսաշրջության զարգացում» գործառ-նական դասակարգման «4637 ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածին՝ «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում »ՀՈԱԿ-ի 2022 թվականի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ---13--- Դեմ---0--- Ձեռնպահ---0---

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՆԱՉԱՊԱՏ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՅԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վահագն Արսենյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

1. Հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի առողջարանային գոտին բարեկարգելու, ինչպես նաև համայնքում սուբվենցիոն ծրագրերի իրականացմամբ պայմանավորված քաղաքի տարածքում կատարվող շինարարական աշխատանքներից բխող անհրաժեշտությունը՝ տալ թույլտվություն համայնքային սեփականություն հանդիսացող զբոսայգիներում, կանաչապատ և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում ծառերի սանիտարական հատման, իսկ Մեծ Հոկտեմբերի 50-ամյակի հուշարձանին կից այգում և «Հայփոստ»-ի Ջերմուկի մասնաճյուղի շենքին հարակից՝ Շահումյան փողոցի երկայնքով մինչ Բ.

Վարդանյանի փողոցի սկիզբը ընկած տեղանքում ծառահատման աշխատանքներ իրականացնելու համար:

2. Սույն որոշման առաջին կետում նշված աշխատանքներն իրականացնել «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի միջոցով:

3. Աշխատանքների արդյունքում առաջացած վառելափայտը տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

4. Ըստ անհրաժեշտության՝ աշխատանքներին մասնակից դարձնել համայնքային ոստիկանության, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի աշխատակիցներին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին
44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2022 թվականի բյուջեից 500 000–ական (հինգ հարյուր հազարական) դրամի չափով ֆինանսական օգնություն տրամադրել 44-օրյա պատերազմի զոհերի՝ թվով 12 ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	

Վարդազարյան Աննա Վասակի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի	բացակա
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը